ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Վիգեն Քոչարյան**
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ .....5

**Լևոն Գևորգյան**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ .....18

**Անի Սիմոնյան**
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....25

**Արթուր Վաղարշյան**
*ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ* ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ .....35

**Տարոն Սիմոնյան**
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....56

**Ալվարդ Ալեքսանյան**
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ .....68

**Նարինե Դավթյան**
*ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ* ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ .....87

**Գևորգ Դանիելյան**
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ .....98

**Վարդան Այվազյան**



ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....124

**Անահիտ Մանասյան**
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ .....140

**Արա Գաբուզյան**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ .....149

**Սամվել Դիլբանդյան**
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ .....160

**Аида Искоян**
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ .....174

**Գրիգոր Բեքմեզյան**
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ .....190

# *ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄ* ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Արթուր Վաղարշյան**

***ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

*Ռեժիմ* եզրույթը լատիներենից փոխառված «regimen» բառն է, որն հայերեն թարգմանվում է վարչակարգ, վարչաձև: Այն իր բովանդակությամբ ընդգրկուն է և օգտագործվում է մի քանի իմաստներով. 1) պետական կարգ, իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների համակցություն, 2) խստորեն կարգավորված կենսական կարգ (աշխատանքի, հանգստի, բուժման, սնվելու, քնի), 3) որոշակի տեսակի գործունեության համար սահմանված պարտադիր կանոնների, պահանջների, նորմերի, սկզբունքների համակարգ (օրինակ՝ նավագնացության, հողօգտագործման, որսի, ձկնորսության, ազատազրկման և այլն), 4) ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի որոշակի կացություն, կարգավիճակ (ռեժիմային օբյեկտ, ռեժիմային արտադրություն, ռեժիմային գործարան): Մեզ հետաքրքրողն այդ հասկացության առաջին իմաստն է, այսինքն՝ ռեժիմը՝ որպես իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների համակցություն: Անհաջող համարելով հայերեն թարգմանությունները՝ հետագա շարադրանքում կօգտագործենք *ռեժիմ* եզրույթը:

Նույն հարթության վրա գտնվող հասկացություններից՝ պետության ձև, պետական կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև, պետական (և իրավական) ռեժիմ, ամենավերացարկված, գիտական կատեգորիայի աստիճանի հասնող է «պետության ձևը»[1]:

[1] Պետության և իրավունքի պատմական զարգացման ընթացքում արտահայտվել են բազում և տարաբնույթ մտքեր, հայեցակարգեր պետության ձևի մասին: Սակայն հետխորհրդային տարածքում իրավագիտության մեջ, գրեթե միանշանակ, ընդունված տեսակետը հանգում է հետևյալին. պետության ձևը՝ որպես հիմնարար պետաիրավական տեսական կատեգորիա, ներառում է իշխանության կազմակերպման երեք փոխկապակցված բաղադրատարրեր՝ պետական կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և պետաիրավական ռեժիմ (տե՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.,** Պետության և իրավունքի տեսություն: Եր., 1997, էջ 120; **Ì óõàâà Ð.Ò.,** Òåîðèÿ ãîñóäàðñòâà è ïðàâà. Ì ., 2001, էջ 118-125 և այլն):

[1] Տե՛ս **Ï ðîòàñîâ Â. Í .,** Òåîðèÿ ãîñóäàðñòâà è ïðàâà. Ïðîáëåìû îáùåé òåîðèè ïðàâà è ãîñóäàðñòâà. (2-å èçäàíèå, äîïîëíåííîå, èñïðàâëåííîå). Ì ., 2001, էջ 62:

[2] Տե՛ս **×èðêèí Â.Å.,** Îñíîâû ñðàâíèòåëüíîãî ãîñóäàðñòâîâåäåíèÿ. Ì ., 1997, էջ 160:



Պետության ձևի երրորդ տարրը, որ այս պահին ընթացիկ, օպերացիոնալ կարգով պայմանականորեն անվանում ենք «պետական ռեժիմ», կարող ենք բնորոշել որպես պետական իշխանության իրականացման մեթոդների և եղանակների համակցություն: Եթե պետական կառավարման և կառուցվածքի ձևերը բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, ապա պետաիրավական ռեժիմը բնութագրում է պետության ձևի գործառութավորումը, դրա բովանդակային կողմը: Պետական ռեժիմը բնութագրում է պետության դինամիկ, գործառույթային կողմը, այսինքն՝ թե ինչպես է այն գործում, իշխում, հասարակության մեջ իշխանության իրականացման ինչպիսի քաղաքական մթնոլորտ է ստեղծում[1]: Պետության ձևի նշված կողմը բնութագրող հասկացությունը խորհրդային պետականագիտություն և իրավագիտություն մուտք է գործել XX դարի 40-ական թվականներին՝ «քաղաքական ռեժիմ» ձևակերպմամբ: Այդ հասկացությունը մշակել և առաջարկել է Ի.Դ. Լևինը: Նա այդ եզրույթն օգտագործել է պետական իշխանության իրականացման մեթոդները՝ ազատական կամ բռնատիրական, նշելու համար[2]: Ըստ Վ.Ե. Չիրկինի «պետության ձևի գիտական կատեգորիայի մեջ երրորդ տարրի ընդգրկումը էական առաջընթաց էր: Այն պետականագիտությունը դուրս բերեց պետության ձևի կազմակերպական կողմերի վերլուծության շրջանակից՝ ուշադրությունը հրավիրելով քաղաքական ինստիտուտների գործունեության մեթոդների, մարդու հիմնական իրավունքների կենսագործման, երկ-

ռում ժողովրդավարության և «քաղաքական» կլիմայի վիճակի վրա։ Պետության ձևի բնութագիրը հարստացվեց նոր գիտելիքներով»[1]։

Պետությունը սոցիալական հարաբերությունները կարգավորում է տարբեր միջոցների օգնությամբ՝ բռնություն, հարկադրանք, համոզում, շահ, սարսափ և այլն։ Այսպիսով՝ քաղաքական, նաև պետական իշխանությունն իրականացվում է միջոցներով, մեթոդներով, որոնց համակցությունը որոշում է անհատի ազատության ու իրավական կարգավիճակի աստիճանը, և կոչվում է քաղաքական (նաև պետական) ռեժիմ։ Իշխանության իրականացման գործընթացն արտացոլում են «քաղաքական համակարգ» (միջուկը պետությունն է), «քաղաքական իշխանություն», «պետական իշխանություն» հասկացությունները։ Դրա արդյունքում տեսական գրականության մեջ առկա են «քաղաքական ռեժիմ»[2], «պետական ռեժիմ»[3], «պետահիրավական ռեժիմ»[4], «պետաքաղաքական ռեժիմ»[5], «քաղաքական-իրավական ռեժիմ» հասկացությունները, որոնց մեկնաբանությունները հաճախ չեն համընկնում։ Փորձենք պարզել դրանց իմաստը և հարաբերակցությունը՝ կանգ առնելով մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների վրա՝ համադրելով և վերլուծելով դրանք։

Անգլո-ամերիկյան քաղաքական-իրավական գիտության մեջ «քաղաքական ռեժիմ» հասկացությունը մեկնաբանվում է լայն իմաստով և նույնացվում է «քաղաքական համակարգ» հասկացությանը։ Այդ դեպքում քաղաքական ռեժիմը ներառում է պետության և ոչ պետական կազմակերպությունների միջև փոխգործողության բոլոր եղանակները՝ ռեսուրսները, արժեքները, նյութական և սոցիալական բարիքները նրանց համար ցանկալի բաշխման առիթով[6]։ Օ-

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 161։
[2] Տե՛ս Ï îëèòîëîãèÿ äëÿ þðèñòîâ. Ì ., 1999, էջ 209։
[3] Տե՛ս **Ì àð÷åíêî Ì .Í.,** Ïðîáëåìû îáùåé òåîðèè ïðàâà è ãîñóäàðñòâà. Ì ., 2005, էջ 204։
[4] Տե՛ս **Í .È. Ì àòóçîâà è À.Â. Ì àëüêî,** Òåîðèÿ ãîñóäàðñòâà è ïðàâà. Ì ., 1997, էջ 92։
[5] Տե՛ս **Ներսիսյանց Վ.Ս.,** Պետության և իրավունքի տեսություն, Եր., 2001, էջ 84։
[6] Տե՛ս **Ì óõàââ Ð.Ò.,** Òåîðèÿ ãîñóäàðñòâà è ïðàâà. Ì ., 2001, էջ 163։



րինակ՝ ամերիկացի քաղաքագետ Մ. Հագոպյանը «պոլիտիա», «քաղաքական համակարգ», «քաղաքական ռեժիմ» հասկացություններն օգտագործում է որպես հոմանիշներ[1]։ Ըստ նրա՝ այդ եզրույթները լայն իմաստով նշանակում են «քաղաքական կյանքի հիմնարար կազմակերպություն»՝ արտահայտելով քաղաքական կարգի ընդհանուր կառուցվածքային բնութագրեր։ Այսպիսով՝ անգլո-ամերիկյան քաղաքագիտության մեջ նախապատվությունը տրվում է «քաղաքական համակարգ» հասկացությանը, արդյունքում «քաղաքական ռեժիմ» հասկացությունն օգտագործվում է հայեցողաբար, առանց հստակ բովանդակության, երբեմն ոչ միանշանակ։ Ակնհայտ օրինակը «Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարանն» է, որում «regime» - «վարչակարգ» հասկացությունը չունի հստակ բնորոշում և բացատրություն։[2] Այսպիսով՝ անգլո-ամերիկյան քաղաքագիտության մեջ «քաղաքական համակարգ» և «քաղաքական ռեժիմ» հասկացությունների նույնացումը առաջ է բերում տեսական բարդություններ, քանի որ առաջ է գալիս մի շարք երևույթներ մեկ հասկացությամբ նշելու տերմինաբանական կրկնության վտանգ։ Ինչպես ճիշտ նշում է Ռ. Մուխաևը «քա-

[1] Հղումն ըստ՝ **Ãàäæèåâà Ê.Ñ.,** Ââåäåíèå â ïîëèòè÷åñêóþ íàóêó. Ì ., 1998, էջ 112։
[2] Այդ բառարանը «regime» եզրույթը մեկնաբանում է այսպես. «Կառավարման կամ վարչական համակարգ։ Այս բազմիմաստ եզրի ամենատարածված գործածությունը եղել է «զինվորական վարչակարգ» արտահայտությունը..., եզրն ունի ևս մեկ կարևոր իմաստ։ Երբ երկրի կառավարությունները փոխվում են շփոթեցնող հաճախակիությամբ, ինչպես 19-րդ դարի Իսպանիայում կամ 1945 թ. հետո Իտալիայում, հնարավոր է, որ արմատական հեղափոխություններ տեղի չունենան։ Այս պարագայում հնարավոր է խոսել վարչակարգի շարունակականության մասին։ Այլ դեպքում, որն ավելի հազվադեպ է պատահում, վարչակարգի փոփոխության (սահմանադրական միապետությունից բռնապետության, կամ ապակենտրոնացված կառավարումից՝ կենտրոնացված կառավարման) կարելի է հասնել առանց կառավարության փոփոխության, ինչպես անցումը խորհրդարանական կառավարումից միանձնյա կառավարման՝ Անգլիայի թագավոր Չարլզ I և Մարգարետ Թեթչերի կողմից» (տե՛ս **Մակլին Այեն, Օքսֆորդի բառարան**. քաղաքագիտություն և քաղաքականություն. Եր., Գիտանք, 2003, էջ 453)։

ղաքական համակարգ» և «քաղաքական ռեժիմ» եզրույթները «բնութագրում են քաղաքական իրողության զանազան առումներ. առաջին տերմինը բացահայտում է արտաքին միջավայրի հետ կապերի բնույթը, իսկ երկրորդը բնորոշում է ընդհանուր շահերի իրականացման միջոցները և մեթոդները»[1]: Քաղաքական ռեժիմը քաղաքական համակարգի դինամիկ, գործառութային բնութագիրն է: Այդ հասկացությունները սերտորեն կապված են, սակայն նույնական չեն: Եթե առաջինը ցույց է տալիս հասարակության քաղաքական կյանքին և քաղաքական իշխանությանը մասնակցող ինստիտուտների համալիրը, ապա երկրորդը՝ թե ինչպես է այդ իշխանությունն իրացվում, ինչպես են գործում տվյալ ինստիտուտները:

Մայրցամաքային Եվրոպայի քաղաքագիտական գրականության մեջ «քաղաքական ռեժիմ» հասկացությունը բաժանված է «քաղաքական համակարգ» հասկացությունից: Մայրցամաքային Եվրոպայի իրավաբանական գրականության մեջ «քաղաքական ռեժիմ» հասկացությունը մեկնաբանվում է գործառութային տեսանկյունից և արտահայտում է անհատի ու պետության փոխկապվածության բնույթը: Ռեժիմը բաղկացած է երկու տարրերից՝ ա) քաղաքական կուրսից, որն ընտրում է գերագույն իշխանության կրողը, բ) ընտրված կուրսի իրականացման քաղաքական գործունեությունից, ներառյալ ու առաջին հերթին իշխանության իրականացման մեթոդները[2]: «Քաղաքական համակարգ» և «քաղաքական ռեժիմ» հասկացությունների տարանջատման հետ մեկտեղ մայրցամաքային Եվրոպայում չկա հստակ մշակված «պետության ձևի» հայեցակարգը, դրա բաղադրատարրերը, «պետական ռեժիմ» հասկացությունը որպես դրա տարր, ինչպես դա արված է ռուս պետականագիտության մեջ[3]:

[1] Տե՛ս **Му. аев Р.Т.,** Теор, яяпол, т, к, .яМ., 2005, էջ 160:
[2] Տե՛ս **Му. аев Р.Т.,** Теор, яягосударствая, яправа.яМ., 2001, էջ 164:
[3] Տե՛ս օրինակ՝ **Zippelius Reinhold,** Allgemeine Staatslehre. Munchen,1994, էջ 152-206:



Գերմանական պետականագիտությունը «պետության ձևը» բնորոշում է որպես պետության իրավական հիմնակարգ (Grundordnung), որի տարատեսակներն են միապետությունը, հանրապետությունը՝ կախված պետության բարձրագույն մարմնի ձևավորումից: Ըստ պետական իշխանության կրողների քանակի՝ առանձնացվում են միապետությունը, քչերի իշխանությունը, ժողովրդի իշխանությունը: Այստեղ մեր իրավագիտության մեջ ավանդաբար օգտագործվող *պետական ռեժիմ* հասկացությունը, ըստ էության, գոյություն չունի: Գերմանական իրավագիտության մեջ կա նաև «Staatszwecken» հասկացությունը (բառացիորեն՝ պետական նպատակ), որի տարատեսակներն են «ազատական պետությունը» և «ընդհանուր բարեկեցության պետությունը» («Wohlfahrtsstaat»)[1]:

Խորհրդային և հետխորհրդային քաղաքական և իրավաբանական գրականության գիտական ապարատում իրենց կայուն տեղն ունեն «քաղաքական ռեժիմ», «պետական ռեժիմ» հասկացությունները: Ընդ որում ռուս իրավագիտությունն այդ հասկացությունների հարաբերակցության հիմնախնդրի պարզաբանման ընթացքում առաջ քաշեց նաև «պետահիրավական», «քաղաքական-իրավական», «պետական-քաղաքական ռեժիմ» հասկացությունները, որն էլ ավելի բարդացրեց իրավիճակը այն պատճառով, որ այդ հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրը տարբեր հեղինակներ մեկնաբանում են տարբեր կերպ:

Հեղինակների մի մասը «քաղաքական ռեժիմ» և «պետական ռեժիմ» հասկացությունները համարում է հոմանիշներ և որպես փոխզիջումային լուծում՝ օգտագործում է «պետաքաղաքական ռեժիմ» կամ «պետական (քաղաքական) իրավական ռեժիմ» հասկացությունը: Այսպես՝ Վ. Ներսեսյանցը գտնում է, որ պետության ձևը պետական իշխանության կազմավորման, կազմակերպման և իրականացման եղանակն է, որն իր մեջ ներառում է երեք փոխկապված

[1] Տե՛ս **Carl Creifelds,** Rechtsworterbuch. 13. Auflage. Munchen,1996, էջ 1145:

տարրեր՝ կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև և **պետական (քաղաքական) վարչակարգի ձև**: Ըստ Ներսեսյանցի՝ «Պետական (քաղաքական) վարչակարգի ձևը պետական իշպանության իրականացման իրավական կարգի բնույթն է, հատկությունը և որակը: Այստեղ հիմնականն այն հարցերն են, թե ինչպես, ինչ եղանակով և ինչ ձևով է իրականացվում պետական իշխանությունը… Պետական (քաղաքական) վարչակարգն իր էությամբ միշտ էլ պետական-իրավական վարչակարգն է, պետության գործունեության որոշակի իրավական կարգը, պետության իշխանության իրականացման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները, եղանակները և մեթոդներն է: Պետական (քաղաքական) վարչակարգի տարբեր ձևերը, իրենց էությամբ լինելով իրավական, միաժամանակ իրարից տարբերվում են իրենց իրավական զարգացվածության մակարդակով և աստիճանով՝ համապատասխան իրավական կարգի իշխանության իրականացման իրավական հնարքների ու ընթացակարգերի բնույթով ու որակով: Նման իրավական չափանիշներին համապատասխան՝ պետական (քաղաքական) վարչակարգերը բաժանվում են երկու խմբի՝ ազատականների և ավտորիտարների»[1]:

Ներսեսյանցի տեսակետը յուրահատուկ է նրանով, որ ավանդաբար պետական ռեժիմի տարատեսակներ համարվող բռնակալական, ռազմառստիկանական, ֆաշիստական, ռասսայական, ազգայնական, կուսակցական, դասակարգային, ամբողջատիրական և այլ վարչակարգերը չեն համարվում պետական կառավարում, ոչ թե պետություն են, այլ բռնատիրություն, որում չկա իշխանության իրականացում որոշակի իրավակարգի շրջանակներում: Հետևաբար թվարկվածները չեն տեղավորվում «պետական (քաղաքական)

[1] Տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.,** Իրավունքի և պետության տեսություն, Եր., Նաիրի, 2007, էջ 84:



ռեժիմ» հասկացության մեջ, դրանք բռնակալական վարչակարգի տարատեսակներ են, բարց ոչ պետական[1]:

Ներսեսյանցի տեսակետին են նաև այն գիտնականները, ովքեր պետության ձևի երրորդ տարրը նշելու համար օգտագործում են «քաղաքական ռեժիմ» հասկացությունը՝ որևէ իմաստային տարբերություն չդնելով քաղաքականի և պետականի միջև: Օրինակ՝ Ա. Գոլովիստիկովը «պետության քաղաքական ռեժիմը բնորոշում է՝ որպես պետական մարմիններին պատկանող իշխանության իրականացման մեթոդների, եղանակների և միջոցների համակցություն», որն արտահայտում է ժողովրդավարության զարգացման մակարդակը: Այս հեղինակները նույնիսկ չեն քննարկում *պետական ռեժիմ* հասկացությունը, որովհետև քննարկվող երևույթը նշելու համար նրանք օգտագործում են «պետության քաղաքական ռեժիմ» եզրույթը[2]: Այս մոտեցմանը հարում են նաև այն հեղինակները, ովքեր պետության ձևի երրորդ տարրը նշելու համար օգտագործում են «պետական ռեժիմ» հասկացությունը՝ դրա մեջ դնելով լայն և ընդգրկուն իմաստ, որ ներառում է նաև քաղաքական համակարգին բնորոշ հատկանիշները[3]:

Հեղինակների երկրորդ խումբը «քաղաքական ռեժիմը» նույնացնում է «կառավարման ձևի» հետ՝ նեղացնելով առաջին հասկացության ծավալը: Այս դեպքում քաղաքական ռեժիմների դասակարգումն իրականացվում է պետության օրենսդիր և գործադիր գործառույթների հարաբերակցության հիման վրա: Դրանից ելնելով՝ այս

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 84:

[2] Տե՛ս **Головистикова Ю.А.**,яПроблемыяобщейятеор, , яправая, ягосу— дарства.яМ., 2005, էջ 290: Նմանատիպ տեսակետներ են արտահայտել նաև Ա.Պ. Ցիգանկովը, Ա.Ա. Գրոմիկոն և այլք (տե՛ս **Цыганков А.П.**и Пол, т, ческ, еяреж, мы:яструктура,ят, полог, я,яд, нам, ка.яМ., 1995; Гром, коя**А.**АяПол, 2, ческ, еяреж, мы.яМ.,я2000;я**Венгеровя**А.Б.яТеор, яя государс2вая, яправа.яПодяред.яГ.Н.яМанова.яМ.,я1995. էջ 147-148:

[3] Տե՛ս օրինակ՝ **Поляковя**А.В.я**Тимошинаяя**Е.Б.иОбщаяя2еор, яяправа.яМ.,я 2005. էջ 234:

հեղինակներն առանձնացնում են **իշխանությունների ձուլման** (բացարձակ միապետություն) **իշխանությունների բաժանման** (նախագահական հանրապետություն) և **համագործակցության ռեժիմները** (խորհրդարանական միապետություն)[1]: Սակայն քաղաքական ռեժիմի նման մեկնաբանումը նեղ է և հաշվի չի առնում այնպիսի քաղաքական ինստիտուտներ, ինչպիսիք են կուսակցական համակարգը, ճնշման խմբերը և այլն, այդ իսկ պատճառով արժանի է արդարացի և հիմնավոր քննադատության:

«Քաղաքական ռեժիմ» և «պետական ռեժիմ» հասկացությունների հարաբերակցության լուծման հաջորդ մոտեցումը հանգում է դրանց իմաստային տարբերակմանը: Այս մոտեցումն ընդունող հեղինակները գտնում են, որ քաղաքական և պետական ռեժիմները չհամընկնող երևույթներ են, ինչպես և դրանց հետ կապված «քաղաքականություն» և «պետություն» հասկացությունները: Մասնավորապես Ռ. Մուխաևը կարծում է, որ «քաղաքական ռեժիմը» ավելի լայն է իր ծավալով, քան «պետական ռեժիմը», քանի որ իրենում ներառում է հասարակության նկատմամբ ինչպես պետական հարկադրանքը, այնպես էլ ոչ պետական ներգործության միջոցներն ու մեթոդները[2]:

Լենինի կողմից «քաղաքական ռեժիմ» հասկացության օգտագործման պահից իրավագիտության զարգացումը ցույց տվեց, որ «քաղաքական ռեժիմը» շատ ավելի լայն է իր կողմից բնութագրվող պետության ձևի բաղադրատարրից: Քաղաքական ռեժիմը չի կարող հանգեցվել պետության ձևի որևէ տարրին: Այն այս կամ այն երկրում կազմավորվում է որպես զանազան գործոնների գործողության արդյունք, ընդ որում՝ ոչ միայն պետական մարմինների, այլ նաև քաղաքական կուսակցությունների, քաղաքական նպատակներ հետապնդող զանգվածային շարժումների գործունեության, իսկ երբեմն էլ բնակչության զանգվածային ելույթների հետևանքով: Արտապետական բոլոր գործոնները չնայած և ազդում են պետական ռեժիմի, պետության և նրա մարմինների գործունեության վրա, այնուամենայնիվ դրանք չեն մտնում հենց պետական իշխանության իրականացման մեթոդների հասկացության մեջ: Քաղաքական ռեժիմը լայն հասկացություն է, քան պետական ռեժիմը, չնայած վերջինս, որպես կանոն, գլխավորն է քաղաքական ռեժիմում, նրա էությունը, սիրտը: Հետևաբար, «քաղաքական ռեժիմ» եզրույթի օգտագործումն անտեղին է: Պետության ձևի գործառութային կողմը բնութագրող տարրը համարվում է «պետական ռեժիմը», այլ ոչ թե «քաղաքականը»: Իսկ «քաղաքական-պետական ռեժիմ» եզրույթն ըստ էության կրկնաբանություն (տավտալոգիա) է: Ինքը պետականությունը՝ որպես երևույթ, արդեն իսկ քաղաքական է, քաղաքական համակարգի բաղադրատարր է, հետևաբար, ձևակերպման մեջ «քաղաքականը» ավելորդ է:

«Քաղաքական ռեժիմը» «պետական ռեժիմից» լայն հասկացություն համարող տեսակետի կողմնակիցներն իրենց հերթին տարակարծիք են այդ հասկացությունների առանձին-առանձին բնորոշման և ռեժիմների տարատեսակներն առանձնացնելու հարցում: Այսպես՝ պրոֆեսոր Յ. Լեյբոն իմաստային առումով տարանջատում է «պետական ռեժիմ» և «քաղաքական ռեժիմ» հասկացությունները: Նա «պետական ռեժիմը» բնութագրում է՝ որպես պետական իշխանության մեխանիզմի գործունեության ընթացքում ձևավորվող երևույթ, որն արտացոլում է այս կամ այն պետական մարմնի իրական տեղն այդ կառուցակարգում, որոշում է կազմակերպական-թույլատվական և հարկադրական մեթոդների հարաբերակցությունը պետության գործունեության մեջ[1]: Ըստ Լեյբոյի՝ «քաղաքական ռեժիմը» ավելի վաղ ձևավորված և լայն հասկացություն է, որն իր բովանդակությամբ արտացոլում է բոլոր քաղաքական ինստիտուտների գործառութավորման պրակտիկան՝ ներառելով պե-

[1] Տե՛ս **Му. аевя Р.Т.и** Теор, яя государс2вая, я права, я М., я 2001, էջ 164:
[2] Տե՛ս նույն էջը:



[1] Տե՛ս Конс2, 2уц, онноея правоя зарубежныхя с2ранхя Подя редхя МхБхя Баглая, яЮхИхяЛейбо, яЛхМхяЭн2, на, яМхя 2005, яЕ2 171:

տության հետ նաև քաղաքական կուսակցությունները, ընտրական միավորումները, զանգվածային հասարակական կազմակերպությունները: Ընդ որում, ըստ Լեյբոյի, քաղաքական ռեժիմի ուսումնասիրությունը քաղաքագիտության խնդիրն է: Նման մոտեցման հիման վրա Յ. Լեյբոն առանձնացնում է պետական ռեժիմի՝ որպես պետական մեխանիզմում այս կամ այն մարմնի ռեալ դերն արտահայտող երևույթի հետևյալ տեսակները՝ դրանց դասակարգումը սերտորեն կապելով կառավարման ձևի հետ. ա) դուալիստական միապետություն, բ) խորհրդանական պետական ռեժիմ, գ) նախագահական կառավարման ձև և պետական ռեժիմ: Ամեն մի տեսակին բնորոշ են իր տարատեսակները[1]: Պրոֆեսոր Լեյբոն, բացի վերը բերված դասակարգումից, կատարում է պետության ևս մեկ դասակարգում՝ ըստ քաղաքական ռեժիմի: Նրա կարծիքով՝ «պետական ռեժիմը» սերտ կապված է «քաղաքական ռեժիմի» հետ: Վերջինս փաստորեն նախորոշում է պետական ռեժիմի բնույթը: Հետևաբար՝ ժողովրդավարական և ավտորիտար քաղաքական ռեժիմներին համապատասխանում են նույնանուն պետական ռեժիմները[2]:

Քաղաքական ռեժիմը պետական ռեժիմից լայն հասկացություն համարող հեղինակների մյուս խումբը, հստակ տարանջատելով այդ հասկացությունները, այնուամենայնիվ, ավելի հիմնավորված մոտեցում է դրսևորում *պետական ռեժիմ* հասկացության բովանդակության և ծավալի հարցում՝ ավելի լայն իմաստ դնելով դրա մեջ: Այսպես՝ ֆրանսիացի քաղաքագետ Մ. Դյուվերժեյի կարծիքով՝ քաղաքական ռեժիմը իրենից ներկայացնում է «կուսակցությունների համակարգի որոշակի զուգակցումը, քվեարկության կարգը, որոշումների մեկ կամ մի քանի տիպերի, ճնշման մեկ կամ մի քանի

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 173-177:

[2] Այս հիմքով նա առանձնացնում է պետական ռեժիմի ժողովրդավարական և ավտորիտար տարատեսակները (տե՛ս նույն տեղը, էջ 177):



խմբերի զուգակցումը»[1]: Դյուվերժեյի բնորոշումը ճշգրտեց ֆրանսիացի քաղաքագետ Ժ.Լ. Կերմոնը, ըստ որի՝ «քաղաքական ռեժիմը գաղափարախոսական, ինստիտուցիոնալ և սոցիոլոգիական կարգի տարրերի համակցություն է, որ նպաստում է տվյալ երկրում քաղաքական իշխանության ձևավորմանը որոշակի ժամանակաշրջանի համար»[2]: Քաղաքական ռեժիմի նման հասակացությունը եվրոպական քաղաքագիտության մեջ գրեթե համընդհանուր ճանաչում ունի:

Այսպիսով՝ ամփոփելով վերը քննարկված տեսակետները «քաղաքական ռեժիմ» և «պետական ռեժիմ» հասկացությունների վերաբերյալ՝ կարող ենք ասել, որ այդ հասկացությունների հստակ իմաստային տարբերությունը և հատկանիշներն ավելի հիմնավոր և մանրամասն մշակված է խորհրդային և հետխորհրդային ռուս քաղաքագիտության և իրավագիտության կողմից: Քննարկված նյութը միաժամանակ մեզ հնարավորություն է տալիս հանգել հետևյալ **եզրակացությանը**. ի տարբերություն քաղաքականի՝ պետական ռեժիմն իրենից ներկայացնում է պետական մեխանիզմի միջոցով հանրային իշխանության իրականացման ձևերի, մեթոդների և հնարքների համակցություն: Դրանց թվում կարելի է առանձնացնել ինչպես իրավական մեթոդները, այնպես էլ ոչ իրավական (բռնություն, քաղաքական տեռոր՝ ուղղված ընդիմությանը, և այլն): Դրանց

[1] Հղումն ըստ՝ **Му. аевяР.Т.и**Теор, яягосударс2вая, яправахяМхя2001, էջ 164: Արևմտաեվրոպական հեղինակները՝ գլխավորապես քաղաքագետները, որպես քաղաքական ռեժիմի տարրեր դիտարկում են 1) կուսակցական համակարգը, որը նախորոշում է ռեժիմի էությունը, 2) ընտրական համակարգը, 3) գերագույն իշխանության ինստիտուտների կառուցվածքը, 4) պետական իշխանության մարմինների լեգիտիմության սկզբունքը, 5) քաղաքական որոշումների ընդունման եղանակները, 6) շահագրգիռ խմբերը (լոբիականություն, ճնշման խմբեր, արհմիություններ և այլ կազմակերպություններ՝ ստեղծված մասնագիտական, էթնիկ, կրոնական և այլ շահերով) (տե՛ս նույն տեղը, էջ 164-165):

[2] Տե՛ս Quermonne J.- L. Les regimes politiques occidentaux )Ed. du Seuil Paris, 1986. էջ 12:

ընտրությունը կոնկրետ երկրում կախված է քաղաքական ուժերի հարաբերակցությունից: Եթե պետական իշխանությունը հերթով անցնում է տարբեր քաղաքական ուժերին, ապա ռեժիմի մշտական փոփոխությունը էապես ազդում է կառավարման ձևի և պետական կառուցվածքի ձևի վրա:

*Պետական ռեժիմ* հասկացությունն արտահայտում է գոյություն ունեցող իշխանության բնույթը, նրա բովանդակությունը և, սովորաբար, «պետական ռեժիմ» հասկացությունը հանգեցվում է դիկտատուրայի և դեմոկրատիայի՝ որպես հասարակական կյանքի կազմակերպման սկզբունքների, հարաբերակցությանը: Սակայն «պետական ռեժիմ» հասկացությունը չի սպառում քաղաքական իշխանության իրականացման բոլոր միջոցները: Բացի պետությունից, ցանկացած հասարակության մեջ կան ուժեր, որոնք ուղղակի չեն կապված պետական իշխանության հետ, սակայն նրա վրա թողնում են շատ էական ազդեցություն, օրինակ՝ արդյունաբերական-ֆինանսական խմբերը, ռազմաարդյունաբերական համալիրը, արհմիությունները, քաղաքական կուսակցությունները, ստեղծագործական միությունները, ԶԼՄ-ները, եկեղեցին: Պատմականորեն «քաղաքական ռեժիմ» հասկացությունը ճիշտ էր օգտագործելու համար մինչև 18-րդ դարի կառավարման ձևերը նշելու համար, այսինքն՝ մինչև քաղաքական կուսակցությունների ծագման պահը: Այն ժամանակ պետությունը քաղաքական իշխանության միակ սուբյեկտն էր՝ նրա կրողը: Քաղաքական կուսակցությունների, շարժումների, կազմակերպությունների առաջ գալով՝ քաղաքական իշխանության պետական մենաշնորհը անհետանում է: Այդ կազմակերպությունները ձևավորվում են «հասարակության քաղաքական համակարգ» համակցության մեջ և դառնում են քաղաքական կյանքի մասնակից, պայքարում իշխանության համար, ազդում նրա վրա: Հետևաբար, «պետական ռեժիմ» հասկացությունը նեղ է «քաղաքական ռեժիմ» հասկացությունից:



Գիտական գրականության մեջ առկա են պետաիրավական ռեժիմի մի քանի բնորոշումներ և պատկերացումներ դրա մասին: Դրանց մի մասը նշանակալիորեն չի տարբերվում իրարից: Մյուսները ներմուծում են էական ճշգրտումներ պետաիրավական ռեժիմի ավանդական պատկերացումներում: Ամենից տարածված բնորոշումը ներկայումս համարվում է հետևյալ բնորոշումը (կամ դրան մոտ կանգնած այլ բնորոշումները). պետաիրավական ռեժիմը պետական իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների և (կամ) հնարքների համակցությունն է[1]: Նույնանման է նաև Ռ. Մուխաևի բնորոշումը. պետական ռեժիմն իրենից ներկայացնում է պետական կառուցակարգի միջոցով հանրային իշխանության իրականացման ձևերի, մեթոդների և հնարքների համակցությունը[2]:

Նմանատիպ բնորոշումներ առկա են բազմաթիվ այլ հեղինակների մոտ, որոնք, ըստ էության, որևէ ճշգրտում չեն մտցնում «պետական ռեժիմի» հասկացության բնորոշման մեջ:[3] Պետական կամ պետաիրավական ռեժիմի վերը թվարկած բնորոշումները, այսպես կոչված, ավանդական բնորոշումներ են: Ավանդական բնորոշմանը հարում են դրան նման, սակայն միևնույն ժամանակ որոշակի չափով տարբերվող բնորոշումները: Բերենք դրանցից մի քանիսը:

**Առաջին**՝ պետական ռեժիմը պետական կազմակերպության կոնկրետ դրսևորումն է, որն արտահայտվում է ժողովրդավարութ-

---

[1] Տե՛ս **Марченкоя М.Н.и** Теор, , я государс2вая, я правая вя вопросахя, я о2ве2ахх я Мх 2005, էջ 76:

[2] Տե՛ս **Му. аевя Р.Т.и** Теор, я государс2вая, я правахх Мхя 2001, էջ 165:

[3] Տե՛ս օրինակ՝ **Խրոպանյուկ Վ.Ն.,** Պետության և իրավունքի տեսություն: Եր., 1997, էջ 152; **Цыганковя А.П.и** Пол, 2, ческ, еяреж, мы;яс2рук2ура,я 2, полог, я,яд, нам, кахх Мхя 1995;я **Головистиковая Ю.А.и** Проблемыяоб — щейя 2еор, , я правая, я государс2вахх я Мхя 2005,я էջ 290;я **Поляковя А.В.и Тимошиная Е.Б.и** Общаяя 2еор, яя правахх я СПбхя 2005хх я էջя 234;я Общаяя 2еор, яя правахх Подяредхх П, голк, ная АхСхх Мхя 1996,я էջ 79;я **Лазаревя В.В.и Липенья С.В.**,я Теор, я гос3дарс2вая, я права,я Мхя 2004, էջ 128 և այլն:

յան, հասարակության մեջ քաղաքական ազատության վիճակով և բնույթով[1]: Այս բնորոշման մեջ ռեժիմը հասկացվելով որպես պետական իշխանության իրականացման, «դրսևորման» գործընթաց և կազմակերպություն՝ լրացվում է նաև այնպիսի հատկանիշով, որ այդ «կոնկրետ դրսևորումն» արտահայտվում է ինչպես ժողովրդավարության «վիճակով ու բնույթով» (այլ կերպ ասած ժողովրդավարության զարգացման մակարդակով), այնպես էլ քաղաքական ազատության վիճակով (զարգացման մակարդակով, երաշխավորվածության աստիճանով): Ըստ էության՝ այս բնորոշումը նոր բան չհաղորդեց ավանդական բնորոշմանը, այլ միայն դրանում ավելացրեց պետական ռեժիմի հավաքական գործողության հետևանքը, արդյունքը՝ ժողովրդավարության աստիճանը:

**Երկրորդ՝** պետական ռեժիմը իշխանավարման ձևերի, մեթոդների, միջոցների և եղանակների համակցությունը կամ համակարգն է, «որի միջոցով պետական իշխանությունը լեգիտիմացնում է իր գոյությունը և գործողությունը»[2]: Այս բնորոշման մեջ աչքի են ընկնում երկու պահեր, որոնցով այն տարբերվում է ավանդական բնորոշումից: Նախ, ռեժիմը կապվում է ոչ միայն պետական իշխանության գործառութավորման հետ, այլև նրա գոյության գործընթացի հետ: Երկրորդ՝ պետական ռեժիմը կապվում է պետական իշխանության լեգիտիմացման (իրավահեղինականացում) գործընթացին: Այդ դեպքում լեգիտիմության տակ հասկացվում է «իշխանության ընդունումը նրան ենթարկված սուբյեկտների կողմից և վերջիններիս համաձայնությունը, որ այդ իշխանությունը (իդեալում լինելով օրինական-լեգալ), համապատասխանում է քաղաքացիների ընդհանուր պատկերացմանն արդարացի քաղաքական համակարգի

[1] Տե՛ս **ПетровяВ.С.и**СЗщнос2ь,ясодержан, ея, яформаягос3дарс2вахяЛх, 1971, էջ 1112:

[2] Տե՛ս **Киреевая С.А.и** Пол, 2, ческ, йя реж, мя какя элемен2я формыя гос3дарс2вая(2еоре2, коф правовоея, сследован, е):яАв2орефяд, ссэнаэя со, скан, еяЗчэс2экандэюрэна3кэяСара2ов,я1997, էջ 17:



մասին»[1]: Այլ խոսքով՝ իշխանության լեգիտիմությունը նշանակում է դրա ճանաչում, ընդունում և պաշտպանություն քաղաքացիների կողմից՝ որպես արդարության իրենց պատկերացմանը համապատասխանող:

**Երրորդ՝** քաղաքական ռեժիմը քաղաքական իշխանության իրականցման մեթոդներն են, հասարակության արդյունքային քաղաքական կացությունը, որ ձևավորվում է զանազան քաղաքական ուժերի փոխգործողության և հակամարտության, քաղաքական ինստիտուտների գործողության հետևանքով և բնութագրվու�է ժողովրդավարականությամբ կամ հակաժողովրդավարականությամբ:[2] Այս բնորոշման առանձնահատուկ պահերը երեքն են. ա) այն պետական ռեժիմի լայն բնորոշում է, այսինքն՝ «քաղաքական ռեժիմի» բնորոշում, և վերաբերում է, ըստ էության, ոչ միայն պետական իշխանության համակարգին, այլ քաղաքական ողջ համակարգին և նրա բոլոր սուբյեկտներին: Այս տեսանկյունից՝ նման բնորոշումը մեզ համար անընդունելի է, որովհետև, իհարկե, ընդունելով «քաղաքական ռեժիմ» հասկացության գոյության իրավունքը, մենք խնդիր ենք դրել հետազոտել և բացահայտել «պետական ռեժիմ» հասկացությունը,

բ) ինչպես և նախորդ բնորոշումը, ևս այս բնորոշումը ռեժիմի գործողության հետևանքը կամ արդյունքը՝ ժողովրդավարականությունը կամ հակաժողովրդավարականությունը ներառում է բնորոշման մեջ սինթեզված հատկանիշների շարքում: Դա սկզբունքորեն ընդունելի լուծում է և որոշակիորեն անհրաժեշտ,

գ) այս բնորոշումը քաղաքական ռեժիմը պայմանավորում է հասարակության մեջ քաղաքական ուժերի դասավորությամբ, հարաբերակցությամբ, հավասարակշռությամբ:

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 26:

[2] Տե՛ս Теор, яягос3дарс2вая, яправаэяУчебн, кэяПодяредэяВэМэяКорельсф кого,яВэДэяПереваловаэяМэ, 1997, էջ 185:

**Չորրորդ՝** «պետական ռեժիմ» հասկացությունը մեկնաբանվում է՝ որպես պետական իշխանության իրականացման եղանակներ: Այս կատեգորիան արտահայտում է պետական հաղորդակցության սուբյեկտների (քաղաքացիներ, հպատակներ, սոցիալական խմբեր, հասարակական միավորումներ) մասնակցության չափը և բնույթը պետական իշխանության ձևավորմանը և իրականացմանը[1]: Նման բնորոշումը հատուկ քննարկման առարկա չենք դարձնի, որովհետև այն այլ բնորոշումների համեմատ շատ է նեղացնում պետական (քաղաքական) ռեժիմի բովանդակությունը և հասկացության մեջ ներառվող հատկանիշների (հատկությունների) շրջանակը՝ կապելով դա միայն բնակչության պետական իշխանության կազմավորմանը և իրականացմանը մասնակցելու հետ: Դրանով իսկ այն աղքատացնում է պետական-քաղաքական ռեժիմի բովանդակությունը:

Պետական ռեժիմի ավանդական բնորոշումների և դրանց հարող նույնամակարդակ բնորոշումների կողքին առանձնանում են պետական (քաղաքական) ռեժիմի, այսպես կոչված, իրավականացված կամ իրավաբանականացված բնորոշումները: Այս բնույթի բնորոշումներից աչքի են ընկնում Վ. Ներսեսյանցի բնորոշումը: Նա պետական իշխանության իրականացման ձևերի, եղանակների հիմնահարցերի տեսական արտացոլումն ամրագրում է «պետական (քաղաքական) վարչակարգ» (ռեժիմ) հասակացության մեջ բնորոշելով այն՝ որպես պետական իշխանության իրականացման իրավական կարգի բնույթ, հատկություն, որակ[2]: Այս բնորոշման մեջ նորությունն այն է, որ հեղինակը պետական (քաղաքական) ռեժիմին իր էությամբ համարում է «պետական-իրավական վարչակարգ, պետության գործունեության որոշակի իրավական կարգ,

[1] Տե՛ս Проблемыяобщейя2еор, , яправая, ягос3дарс2ваяПодяобщяредя ВяСяНерсесянцаяМэя1999;яէջ 608:

[2] Տե՛ս **Ներսիսյանց Վ.Ս.,** Պետության և իրավունքի տեսություն, Եր., 2001, էջ 84:



պետության իշխանության իրականացման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները, եղանակները և մեթոդները»[1]: Հետևաբար, պետական ռեժիմի տարբեր ձևերը, իրենց էությամբ լինելով իրավական, միաժամանակ իրարից տարբերվում են նաև իրենց իրավական զարգացվածության մակարդակով և աստիճանով, համապատասխան իրավական կարգի բնույթով և որակով: Ներսեսյանցի այս բնորոշումը և հիմնավորումները լիարժեք հաստատում են, որ պետության ձևի երրորդ տարրը անպայմանորեն պետք է արտացոլվի «պետահիրավական ռեժիմ» եզրույթով, այլ ոչ թե «պետական ռեժիմով»:

«Պետահիրավական ռեժիմ» եզրույթի օգտագործման հակառակորդ է Վ.Ե. Չիրկինը: Նա դրա մեջ տեսնում է ռացիոնալ հատիկ: Սակայն, ըստ Չիրկինի, նման բնորոշման մեջ բացասական կողմերն ավելի ծանրակշիռ են: Առաջին՝ «պետահիրավական ռեժիմ» եզրույթը սովորաբար մեկնաբանվում է՝ որպես իրավունքի մի ճյուղից՝ սահմանադրական իրավունքից, ածանցված հասկացություն, սակայն իշխանությունն իրականացնելիս օգտագործվում են նաև այլ ճյուղերի մեթոդներ: Երկրորդ՝ պետական ռեժիմը չի սահմանափակվում միայն իրավական մեթոդներով: Իրական կյանքում պետությունը օգտագործում է իրավունքով չկարգավորված, իսկ երբեմն էլ նաև հակահիրավական մեթոդներ: Հետևաբար, ըստ Չիրկինի, պետահիրավական ռեժիմը չի ընդգրկում պետական իշխանության իրականացման մեթոդների ողջ բարդությունը[2]:

Այն, որ պետական-քաղաքական ռեժիմը, որպես կանոն, միշտ համարվում է պետական-քաղաքական-իրավական ռեժիմ, և իրավական հանգամանքը չի կարելի դուրս թողնել այդ հասկացության բնորոշման մեջ ներառված հատկությունների շրջանակից, անվերապահորեն ընդունում է նաև մեկ այլ հեղինակ՝ Ա.Բ. Վենգերովը:

[1] Տե՛ս նույն էջը:

[2] Տե՛ս **ЧиркиняВ.Е.и**яОсновыясравн, 2ельногоягос3дарс2воеден, яяМэя 1997, էջ 162:

Ըստ նրա՝ «քաղաքական ռեժիմի» տեսակի որոշման չափանիշնե-րից մեկը համարվում է պետական իշխանության իրականացման այս կամ այն եղանակների կիրառման իրավական ձևը: Ընթանում է արդյոք պետական իշխանավարման այդ գործընթացը սահմանված իրավական ձևով, թե թագավորում է ամենատարած կամայակա-նությունը, «իշխանավորների» եսաշահ հայեցողությունը, ուղղված է արդյոք այդ իրավական ձևը հիմնական սոցիալական արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, պետության և քաղաքացիների փոխադարձ պատասխանատվության պաշտպա-նությանը, թե ծառայում է որպես շքամուտք, իշխանությունների հրեշավոր չարաշահումների քողարկում, որոնք իրականացվում են այդ շքամուտքի ետևում՝ ի շահ պետական ապարատի, նրա ղեկա-վարների կամ երբեմն էլ մեկ լիդերի»:[1]

Պետական-քաղաքական ռեժիմի և նրա իրավական ձևերի անխզելի կապն ունի ոչ միայն գործնական, այլ նաև տեսական նշա-նակություն այն իմաստով, որ ռեժիմի բնորոշումը միշտ կապված է այն բանի հետ, թե ինչպիսի իրավական կամ հակաիրավական ձևե-րով է այն հառնում, հետևաբար, այն պետք է ներառվի «ռեժիմի» բնորոշման մեջ ընդգրկված հատկությունների (հատկանիշների) շրջանակում:

Այսպիսով՝ պետական կամ քաղաքական ռեժիմի բոլոր տեսա-կի բնորոշումների քննարկումները մեզ բերում են այն համոզման, որ այդ հասկացության ավանդական բնորոշումը պետք է լրացվի մի շարք հատկություններով և ճշգրտվի: **Առաջին՝** պետական ռեժի-մի և իրավական կարգի՝ ձևի միջև առկա է անխզելի կապ, որի արդյունքում «պետական ռեժիմ» եզրույթը պետք է լրացվի «իրավա-կան» եզրույթով, իսկ պետության ձևի երրորդ բաղադրատարր պետք է անվանվի «պետաիրավական ռեժիմ» (վարչակարգ, վար-չաձև): **Երկրորդ՝** «պետաիրավական ռեժիմ» հասկացությունը

[1] Տե՛ս **ВенгеровяА.Б.и**Теор, яягос3дарс2вая, яправазяУчебн, кэяМэ 2002, էջ 148:



պետք է ներառի նաև արդյունքային, հետևանքային հատկություն-ներ, այսինքն՝ «ռեժիմի» գործողության իրական, փաստական հա-սարակական կացությունը, վիճակը ի դեմս ժողովրդավարության կամ հակաժողովրդավարության: **Երրորդ՝** կարծում ենք ռացիոնալ հատիկ կա նաև այն բնորոշման մեջ, որը պետական ռեժիմը կա-պում է պետական իշխանության լեգիտիմացման գործընթացի հետ: Ի վերջո, իր ձևակազմական, պետաինստիտուցիոնալ և իրավական կարգի հատկություններով ռեժիմը կարող է լինել «ժողովրդավա-րական» մոդելով կամ հարել դրան, բայց այն կարող է չընդունվել, չճանաչվել բնակչության մեծամասնության կողմից, չհամընկնել բնակչության իրավական իդեալներին և արդարացի կարգերի վե-րաբերյալ նրա պատկերացումներին:

Այժմ փորձենք այս երեք հետևությունների և «պետական ռեժի-մի» ավանդական հասկացության ինտեգրման, սինթեզման ճանա-պարհով կառուցել «պետական-իրավական ռեժիմի» բնորոշումը, այն է. **պետական-իրավական ռեժիմը պետական կառուցակարգի միջոցով հանրային իշխանության իրականացման, ինչպես նաև պետության գործունեության իրավական ձևերի, մեթոդների, միջոց-ների, եղանակների և հնարքների համակցությունն է, որոնցով պե-տական իշխանությունը լեգիտիմացնում է իրեն (գոյությունը և գոր-ծողությունը), և որի հավաքական գործողության հետևանքը ժո-ղովրդավարության փաստական մակարդակն է:**

# ПРОБЛЕМЫ ПОНИМАНИЯ И ОПРЕДЕЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОГО РЕЖИМА КАК ЭЛЕМЕНТА ФОРМЫ ГОСУДАРСТВА

**Артур Вагаршян**

***Заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ, доктор юридических наук, профессор***

В статье на основе анализа понятии политический режим, государственний режим, государственно-политический режим, государственно-правовой режим, политико-правовой режим автор делает попытку разграничить их смысл и соотношение, выявить признаки понятия государственно-правовоого режима и дать его научное определение.

# THE ISSUES RELATED TO THE UNDERSTANDING AND DEFINITION OF THE STATE-LEGAL REGIME AS AN ELEMENT OF STATE FORMATION

**Artur Vagharshyan**

***Head of the YSU Chair of Theory and History of State and Law, Doctor of Legal Sciences, Professor***

Based on the analysis of the concepts political regime, state regime, state-political regime, political-legal regime, state-legal regime, the author attempts to differentiate their meanings and relations, to identify the features of the state-legal regime and to give its scientific definition.

**Բանալի բառեր՝** *պետության ձև, պետական ռեժիմ, քաղաքական ռեժիմ, պետաքաղաքական ռեժիմ, պետական կառավարման ռեժիմ, լեգիտիմություն, պետաիրավական ռեժիմ:*

**Ключевые слова:** *политический режим, государственний режим, государственно-политический режим, режим государственного правления, политико-правовой режим, легитимность, государственно-правовой режим.*

**Key Words**: *political regime, state regime, state-political regime, regime of state governance, political-legal regime, legitimacy, state-legal regime.*



# ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Տարոն Սիմոնյան**

***ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու***

Առաջին հայացքից բավականին խրթին հիմնախնդիրները, որ բարձրացված են հոդվածի վերնագրում, հետազոտողին միանգամից անլուծելի կամ գրեթե անլուծելի խնդրի առջև են կանգնեցնում: Բացի այն, որ վերնագրում ներկայացված յուրաքանչյուր բառ-հասկացություն ինքնին առանձին բացատրության, պարզաբանման կարիք ունի, դրանցով սահմանված խնդիրներն ավելի են բարդացնում առաջադրանքը:

Ավելի պարզ լինելու համար կարելի է նշել, թե բարձրացված ընդհանրական հիմնախնդրին ավելի սպառիչ պատասխաններ տալու համար ինչ հարցեր պետք է լուծում ստանան: Այդ հարցերից կարելի է նշել հետևյալները՝

1. Ի՞նչ մեթոդաբանություն կարելի է օգտագործել հասկանալու համար համակարգը, տվյալ պարագայում՝ անկայուն սոցիալ-պետական համակարգը, որը դասական առումով ոչ մի կանոն չունի.

2. Ի՞նչ հարաբերական օրինաչափություններ կարելի է նկատել՝ հարաբերությունների արագ զարգացման գործընթացների պայմաններում արդյունավետ իրավական նորմեր որոշակիացնելու համար, և ինչպե՞ս կարող են անցումային և անկայուն հասարակական համակարգերում որոշակիացվեն իրավական նորմերը, եթե այդպիսի համակարգերում գրեթե ոչ մի կայուն նորմ չի կիրառվում կամ գործում.